ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃՅԱՆ

Դեռևս հին ժամանակներից ժողովրդական բանահյուսությունն անսպառ շտեմարան է եղել հայ գրականության համար: Առանձին ուշադրության են արժանացել բանահյուսության այն նյութերն, որոնք արծարծում են մարդկությանն ուղեկցող հավերժական երևույթներ: Այդպիսի հավերժական բովանդակություն ունի հայկական, կովկասյան, և միջազգային բանահյուսության մեջ տարածված հեքիաթի այն սյուժեն, որը պատմում է կույր պատահականությամբ մեծ փառքի ու հարստության հասած, մինչև անգամ թագավորական գահ բարձրացած ապիկար ու անարժան մարդու մասին: Հեքիաթի հայկական տարբերակը լույս է ընծայել հայտնի բանահավաք Գարեգին Սրվանձտյանցը, որը հայտնի է «Դըժիկոն» վենագրով:

Հեքիաթի հայ և օտարազգի մի շարք տարբերակներից օգտվելով՝ Թումանյանը գրեց «Քաջ Նազար» հեքիաթը, որի հիման վրա Դ. Դեմիրճյանը ստեղծեց իր «Քաջ Նազար» հեքիաթ-կատակերգությունը: «Քաջ Նազար»-ը հայկական երգիծանքի կատարյալ նմուշներից է, որը «քաջնազարականության» լավագույն գեղարվեստական նմուշներից մեկն է հայ գրականության մեջ:

Բնորոշ է, որ նազարականության թեման շատ է հետաքրքրել հայ գրողներին: Այս թեմային անդրադարձել են նաև Ավետիք Իսահակյանը, Ստեփան Զորյանը, Համաստեղը, Վահան Թոթովենցը, Գրիգոր Տեր-Գրիգորյանը, Մկրտիչ Սարգսյանը և այլ հեղինակներ: Այս թեման այնքան խորն ու հավերժական է, որ երբեք չի կորցնում իր գեղարվեստական հրատապությունը: Երևի թե չկա մի համայնք, որտեղ ժողովուրդն իր Նազարը չունենա կամ դրա մասին չխոսի: Նազարի միջոցով հնարավոր է բացահայտել ոչ միայն մարդկային ամենատարբեր արարքներ, այլև բնութագրել մի ամբողջ ժամանակաշրջան՝ քաղաքական վայրիվերումներից մինչև պատմական իրադարձություններ ու բարքեր: Եվ պատահական չէ, որ յուրաքանչյուր հեղինակի «Քաջ Նազարը» կադալով՝ հստակ կարելի է ասել, թե տվյալ ժամանակահատվածում ինչ իրադարձություններ, ինչ քաղաքական մթնոլորտ է գերակայել երկրում: Նազարականությունը բնորոշ է բոլոր ժողովուրդներին, սակայն հայ գրականության մեջ այն մշտապես նոր մեկնաբանություններ է ստանում, քանի որ նման կերպարները տեսանելի են կյանքի տարբեր բնագավառներում, երբեմն էլ ճակատագրական դեր են կատարել և դեռ շարունակում են իրենց այլևայլ դրսևորումները:

1923 թ-ին իր մշակումը հրապարակ հանեց Դերենիկ Դեմիրճյանը: Հիմք ընդունելով ժողովրդական հեքիաթի այն սյուժեն, որը մշակել էր Թումանյանը, Դեմիրճյանն ստեղծեց «Քաջ Նազար» հեքիաթ-կատակերգությունը՝հինգ արարով: Պահպանելով ժողովրդական բնագրի հեքիաթային միջադեպը՝ թատերագիրն ավելի հարստացրեց ու շեշտադրեց Նազարի կերպարը: Նա ստեղծեց հրաշալի

պիես, որն արժանիորեն համարվում է հայ թատերգության լավագույն գործերից մեկը: Նազարն ու նրա շուրջը կատարվող իրադարձություններն այլևս մեկ մարդու ճակատագիր ու պրոբլեմ չեն, այլ հավաքական կերպար և համընդհանուր խնդիր, որն այնքան ճշգրիտ ու գունեղ է ներկայացված, որ կարող է բոլոր ժամանակների հերոս կամ հակահերոս կոչվել:

Դեմիրճյանի ստեղծագործությունն առաջին հայացքից զվարճալի թվացող, սակայն խորը փիլիսոփայական երկ է: Պիեսն այնքան է հագեցած սրամիտ, հումորային երկխոսություններով ու երգիծանքով, որ թվում է՝ մոռանում ենք պատմական ակնարկների և բարոյական ընդհանրացումների մասին:

Դեմիրճյանի Նազարը պարզունակ թվացող, բայց և բազմիմաստ ու խորամանկ կերպար է: Նա սրամիտ է, բայց և հիմար, ստախոս է, միևնույն ժամանակ՝ միամիտ, կեղծավոր ու վախկոտ: Կարող ենք թվարկել կերպարանափոխվելու նրա այլ հատկություններ ևս: Սակայն դա չէ կարևորը: Նույն բնավորությամբ և նմանատիպ իրավիճակներում կարող էր հայտնվել հերոսն ու այդքան հետաքրքիր չլինել: Որքան էլ հետաքրքիր է թեման, դա կարող էր դառնալ սովորական գործ և չհամարվել եզակի: Ինչպես որ հայ շատ հեղինակներ անդրադարձել են այդ թեմային, բայց ժողովրդի հիացական գնահատականին է արժանացել հենց Դեմիրճյանի «Քաջ Նազարը»: Եվ շատ ու շատ քննադատներ էլ հենց անդրադաձրել են այս գործին: Քանի որ այս երկը կարդալիս մոռանում ես թեմայի, խնդրի մասին և սկսում հմայվել: Այս գործը հասցեագրված է բոլորին՝ և՛ մեծերին և՛ փոքրերին, թեպետ Դեմիրճյանը, հավանաբար, չի հետապնդել այդպիսի հատուկ նպատակ:

Այն հետաքրքիր է բոլոր նախասիրությունների և տարբեր խավի մարդկանց համար: Այստեղ կա կենցաղ, գյուղ ու պալատ: Անբան պարծենկոտ ամուսին ու բռի գյուղացի: Հետո բախտի բերմամբ և ընդհանուր կուրության հետևանքով պալատում հայտնված, բայց նույն անբանը մնացած մարդ: Որպես տղամարդ՝ նա ոչնչի պետք չէ. վախենում է ամենքից և ամեն ինչից, աշխատելը համարում է «անազնիվ» գործ: Նազարի կերպարն այնպիսին է, որ նա միշտ կմնա արդիական: Արդիական կմնա նաև այն բարոյա-քաղաքական միջավայրի ու հարաբերությունների շնորհիվ, որը ներկայացրել է հեղինակը: Այստեղ ամեն մի հերոս իր խոսքն ունի, ինչը հենց պիեսի կարևոր հատկությունն է, ամեն մեկի բառն արդեն բնութագիր է: Սա իհարկե բնական է դրամատուրգիական կտավի համար, տաղանդավոր պիեսները հենց այդպես էլ գրվում են, և մեզ շատ հայտնի գործեր հաջողության են հասել մեծամասամբ նաև դրա շնորհիվ: Բայց հայ թատերգության մեջ շատ է պատահում, որ բոլոր հերոսները խոսում եմ մեկ տոնով և նմանատիպ բառերով, և սկսում ես մտածել, որ նրանք բոլորը նույն դպրոցն են գնացել, նույն բակում մեծացել, նույն կինոն դիտել: Եվ հասկանում ես, որ գործ ունես ընդամենը մեկ հերոսի, այսինքն՝ հեղինակի հետ: Իսկ Դեմիրճյանի հերոսները իսկական «թամաշա» են տալիս, այնքան թատերային են, որ թվում է, թե գտնվում ես թատրոնում, ներկայացում դիտում:

Այստեղ մոտենում ենք մեր ուսումնասիրության նպատակային թեմաներից մե-

կին՝ ժանրային կերպափոխման խնդրին: Արձակ շարադրանքից՝ դրամատուրգիա-կան հյուսվածք՝ դրանից բխող ստեղծագործական հետևանքներով: Նախ՝ առավել ընդգծված գեղարվեստական պայմանականություն, թեպետ հեքիաթն ի բնե պայ-մանականություն է:

Երկրորդ՝ նորանոր կերպարների ներմուծում՝ իրենց անհատական, հատկան-շական գծերով, լեզվով ու վարքագծով: Դեմիրճյանն ստեղծում է բազմաշերտ սոցիալական միջավայր: Հեքիաթը վերածվում է դիտարժան հանդիսանքի: Հե-ղինակը կազմակերպում է գործողությունների դինամիկ և զարգացող ընթացք՝ վառ թատերայնության շեշտադրումներով, որոնք տեղ են բացում ռեժիսորական և դերասանական ստեղծագործության համար: Գրարվեստը վերաճում է թատե-րայնության:

Այս պիեսում Նազարը հայտնվում է իրարամերժ իրավիճակներում, և ավելի պարզորոշ է դառնում նրա տեսակը, ինչպես նաև նրա օգնությամբ հասկանում ենք իշխանության հասած անմիտների ու եսասերների կործանարար հետևանքները:

Ի տարբերություն Թումանյանի Քաջ Նազարի՝ Դեմիրճյանի Նազարը վերջում պարտվում է, իսկ Թումանյանի հեքիաթի վերջաբանը հետևյալն է. «Ասում են՝ մինչև էսօր էլ դեռ ապրում ու թագավորում է Քաջ Նազարը: Ու երբ քաջությունից, խելքից, հանճարից մոտը խոսք են գցում, ծիծաղում է, ասում է.

– Ինչ քաջություն, ինչ խելք, ինչ հանճար. դատարկ բաներ են բոլորը: Բանը մարդուս բախտն է: Բախտ ունե՞ս՝ քեֆ արա...

Եվ ասում են՝ մինչև էսօր էլ քեֆ է անում Քաջ Նազարը ու ծիծաղում է աշ-խարհքի վրա»:

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆ

Նշանավոր գրող, դրամատուրգ և հասարակական գործիչ Դերենիկ Դեմիրճյանի տուն-թանգարանը հիմնադրվել է 1977 թվականին Երևանի այն բնակարանում, որտեղ 1929 թվականից մինչև իր մահը ապրել է նշանավոր գրողը (1877-1956): Գրականության և արվեստի թանգարանի մասնաճյուղն է: Ունի 670 հիմնական և գրեթե նույնքան գիտաօժանդակ նյութեր, որոնք լավագույնս ներկայացնում են գրողի անցած բազմամյա ստեղծագործական ուղին: Տուն-թանգարանը բաղկացած է հուշային երեք սենյակներից և մեկ ցուցասրահից: Առաջին սենյակն ամփոփում է գրողի կյանքի և գործունեության վաղ շրջանը, երկրորդը նրա աշխատասենյակն է, իսկ երրորդ սենյակն ընդգրկումէ նրա գրական-հասարակական գործունեության հասուն շրջանը: Ցուցասրահում առավելապես ներկայացված են Դեմիրճյան-թատերագիրն ու նրա երկերի բեմադրությունները ներկայացնող լուսանկարներ: Գրողի անձնական իրերի մեջ ցուցադրվում է նաև նրա ջութակը, որը ստրադիվարուսյան դպրոցի եզակի նմուշ է: Տուն-թանգարանի նյութերի հիման վրա ստեղծվել են հեռուստատեսային և ռադիո հաղորդումներ: Այստեղ պարբերաբար կազմակերպվում են գրական-թատերական ցերեկույթներ, հանդիպումներ, գրքերի շնորհանդեսներ, քննարկումներ՝ նվիրված թեՙդասական գրողի կյանքին ու ստեղծագործությանը և թեՙգրական արդի խնդիրներին ու երևույթներին...

ՀԱՅԸ

Արդյոք մի բան հասկանո՞ւմ եք Հայից... Որքա՞ն տարօրինակ, հանելուկային արարած: Որքա՞ն խաբուսիկ: Երևույթը, ոչ ինքը: Բայց և ի՞նչ է ինքը, իր նկարագիրը: Ջուր աշխատանք. որոնում ես իր ինքնությունը, գտնում, բայց և իսկույն տեսնում ես, որ դա էլ նորից երևույթ էր: Անհանգիստ դեմք ունի, չի թողնում նկարես: Իր ցեղային պատկերն էլ տարօրինակ է: Թվով գրեթե ամենափոքրն է, տառապանքով՝ ամենամեծը, ժամանակով ամենահինն է, վիճակով՝ ամենից անփոփոխը: Ամենից աննպաստը իր երկրի դիրքն է, ինքն ամենից համառ կառչեց նրան: Որքան անհույս է թվում իր ապագան, բայց և որքան հուսացող է նա: Ասենք՝ իր կյանքում երկու բան բնավ չտեսավ. մեկ՝ բախտ, մեկ էլ՝ հուսահատություն: Ինչպե՞ս ճանաչես նրան, ինչպե՞ս չափես: Իր չափը չափազանցն է. զարմանալի հավասարակշռություն, որ ծայրահեղության մեջն է: (Ապա նայիր, սա՞ է հայը. այս չարչին, այս բուրժուան, արարածներից ամենագծուծը և անասուններից ամենակուշտը: Այսքան անխնա ստորացնել իրան... կարո՞ղ է սա չափել աշխարհիս բարձր բաները իր գրվանքով և արշինով: Հանրօգուտ գործի՝ և ոչ մի գրոշ; Բայց մի օր էլ տեսար՝ մեռավ ու ողջ կարողությունը կտակեց հասարակությանը: Դե գնա իմացիր, թե ինչ մարդ էր):

Ահա նայիր այս բեռնակրին. ինչ է սա, իսկական գրաստ, մեջքին մի սար բեռ՝ ճկվում է, մեջքը կոտրում: Աշխատա՞նք է կատարում, թե՞ ինքնախորտակում: Վրե՞ժ ունի, ինչ է, իրենից հանելու: Ու՞մ դեմ է չարացել, որ իրեն է պատժում: Որքան ուժ, որքան աշխատասիրություն: Ապա, տար տունդ ծառա: (Անսիրտ, անշնորհք, ծույլ): Ի՞նչ է միտքը. մի փոքրիկ գումար շինե, գնա դուքան բաց անե: Մարդը իր հացի և գործի տերն է ուզում լինել, և ոչ թե նրա ծառան: Եվ արդեն հայ նշանակում է տեր... Բայց տեսե՞լ եք նրան, երբ գաղթական է. ինչ ծույլ մուրացկան: Ամենաձեռնտու գործը տուր, չի ուզի: Ազգը տա՝ ինքը ուտե: Եվ սովից կմեռնի, անխոս, կասես՝ ջգրու: Եվ այն գյուղացին է, որ երեկ կատաղած, գազազած՝ հողը քանդում էր, չարչարում, մզում, հոգին հանում: Ամենաչարքաշ անասունը՝ իր արտի մեջ: Այնպես է հավաքում բերքը, կարծես հավիտյան պիտի ապրի, կարծես ոչ ոքին բաժին չպիտի թողնե: Բայց գնա իր խրճիթը. հազար գող, մարդ, շուն ու գել նրա հացի վրա են: Ուտում են նրա հացը, ինչպես հայր Աբրահամի սեղանից:

Տեսե՞լ եք նրա բնակարանը՝ խլուրդի ծակուռ... բայց անցիր նրա երկիրը. ինչ հիասքանչ վանքեր, հոյակապ աշտարակներ, գողտրիկ խաչքարեր: Հավատալ կարելի՞ է, թե ինքն է շինել այդ բոլորը: Խոսակցությունն ես լսում՝ հայհոյանքի կեսը եկեղեցի ու Աստված է: Լցրել է իր երկիրը եկեղեցիներով, տարին մի անգամ չի մտնում մեջը՝ աղոթելու: Աղոթք էլ չի անում առօրյա կյանքում. իր կրոնը երբեք չի քարոզել ուրիշներին: Եվ հավատալի բան է, որ իր պատմությունը ամենամեծ կրոնական պատերազմների պատմությունն է, և այս չաղոթող ցեղի Նարեկացու շուրթերից թռավ աղոթքի ամենաբարձր թռիչքը առ Աստված...

Տանել չի կարողանում ծես, ձև, աստիճան, քաղաքավարություն: Ռամիկ է գերազանցապես: Իր Խրիմյան Հայրիկը, ամենից շատ կաթողիկոսությունը ատեց: Դիպլոմատիայի մեջ մի բանումն է շատ հոգածու – անկեղծ լինել: Այնքան անկեղծ է և միամիտ, որ անկասկածելի խորամանկի և կեղծավորի է անում: Մինչդեռ իր հարևանները այս աշխարհի բեմի վրա դեր կատարելով միայն, ցույց են տալիս, թե կացնով հարվածում են դիմացինին, հայը իսկապես կացինը իջեցնում է գլխին: «Ապա ճշմարտությունը», – մտահոգվում է նա:

Դանդալոշ է և խոնարհ՝ իր Սասունցի Դավթի նման է և անասանելի ըմբոստ, հարվածող է նրա պես: (Քծնում է, ստրկանում օտարի ոտի տակ, ինչպես իր Զենով Օհանը, բայց երբ վրա է հասնում գերագույն վտանգը՝ հերոսանում է հանկարծ և ծարավում վիշապի նման): Բարի է առհասարակ, շոյիր, և կկողոպտվի, բայց և, առհասարակ, ինքն է բարեկամ Քեզ, իսկ քո բարեկամությունը վանում է: Այնտեղ, ուր մի ուրիշ ցեղ ուրիշների միայն սերը կարող է վաստակել՝ հայը գտնում է հնարը ատելություն առաջ բերելու: Տաղանդ է՝ իր դեմ ատելություն ստեղծելու: Ուրիշի հաջողության մեջ նախանձոտ է ինչպես վարդապետ: Եթե գժտվեց մեկի հետ՝ ոխակալ է ինչպես ուղտ: Ամեն հայ մի հայ ունի, որի հետ թշնամի է մինչև մահ: Սա նրա անհրաժեշտությունն է: Անկարգ է և անիշխանական թե՛ հասարակության, թե՛ պետության և թե՛ գաղափարների մեջ: Իբրև ժողովական՝ անմիաբան է, անտանելի, խռովարար:

Ուր հեղափոխություն, այնտեղ հայություն: Բայց իբրև «ական» ՝ ծայրահեղական է: Իր կռիվը երեք ճակատի վրա էր միաժամանակ: Շահի դեմ, Սուլթանի դեմ, Ցարի դեմ: Ասենք՝ ամեն հայ մի փոքր շիրակեցի է, Դոն Քիշոտի պես: Կոտորածներից ամենազարհուրելին ինքը տեսավ և ինքն էր, որ չխրատվեց: (Իր օրիենտացիան բացակայի օրիենտացիան է: Թաթա՞րն իր մոտը՝ սպասեց ռուսին, ռու՞սը եկավ՝ աչքը եվրոպացուն էր: Եկա՞վ անգլիացին՝ դարձյալ ռուսին էր սպասում: Ռու՞սն է գալիս՝ չի ընդունում... Ուրեմն իր պետությու՞ննն է ուզում ստեղծել, չի՞ ուզում ստեղծել, ի՞նչ իմանաս... Մի ձեռքը ճանկռտելով հիմնում է այդ պետությունը, մյուս ձեռքը ճիգ է անում, հիմքից քանդելու): Ինչո՞ւ է այսպես, ինչի՞ց է դժգոհ, ի՞նչ է կամենում... Ինչո՞ւ է այսպես անհավասար, ներհակ, մաղձոտ (անհավատալի՝ իր ստորության մեջ), անչափելի՝ իր վեհ թռիչքներում:

Երևի վրեժ ունի նա, մի վատ բան սրտի մեջ, որի համար և մեկուսանում է, որ նյութե, դավե, վնասը: Ոչ հայի ամենամեծ առաքինությու՞ննն ես ուզում – ամենաներողամիտ ցեղը աշխարհիս մեջ: Ի՞նչ եղավ իր պատմությունը – զարհուրելի ջարդեր, խոշտանգում, բնաջնջում... (Բայց ով է ամենից շատ ջանք թափում փրկելու Էնվերին ու Քեմալին) : «Ջարդիր ինձ – ասում է նա, – ահա Քո պատիժը և վրեժը» : Ինձ թվում է, թե շատ մեծ վիրավորանք կա հայի սրտի խորքում, շատ խորը թաղված... Ինձ թվում է, թե դրա համար է նա ջարդվում, ճապոնացու պես, որ երբ մեկից խորապես վիրավորվում է՝ կանչում իր բարեկամներին, հայտնում իր վիրավորանքը և վերցնելով դանակը՝ պատռում իր որովայնը:

Այդպես է հայը: Չի ուզում, որ իրեն դիպչեն, մոտենան, հրեն թեկուզ: Նա

մեկուսի խստակյաց, բարի և ազատակյաց է:

Երբ նայում են հային, ինձ թվում է, թե նրա վիրավորանքը այն արծվի վիրավորանքն է, որին ցած են բերել բարձր լեռներից: Թպրտում է, ընկում քարի, աղբի մեջ: Կեղտոտվում ու թևերը կոտրում: Կերակուր ես մեկնում, չի ուզում: Մաղձոտ է, մեկուսի, բայց չունի գծուծ ատելություն, որ բարձր լեռներին անծանոթ զգացում է: Սա Հայկն է, որին զրկել են կյանքի միակ պայմանից՝ ազատությունից:

«Ոչինչ չեմ ուզում ձեզանից, – ասում է նա իր նեղիչներին,– ձեզ լինի ձեր լուծը, ձեզ լինի ձեր երջանկությունը, գնացեք, ապրեցեք խաղաղ և երջանիկ: Եթե դուք սիրում եք կյանքը, ապա ես սիրում եմ կյանքից ավելի թանկ բանը՝ Ազատությունը»...

ՋՈՒԹԱԿԸ ԵՎ ՍՐԻՆԳԸ

Ո՞վ հնարեց ջութակը...ո՞վ հնարեց սրինգը...

Թարմ գարուն էր, օրը պայծառ, կապուտակ, անգեսի մթին անտառի պուրակում ճախրում էին թռչունները, հովը գալիս, թել–թել տանում էր ծառերի թևերն ու քղանցքները, առուն քչփչում, և գեղեցիկ Լակըմեն սիրում էր երջանիկ Հայանթուն: Հայանթին եղեգնուտի մոտ թեք ընկել, աննպատակ եղեգ էր տաշում ու քաղցր միտք անելով նայում Լակըմեին, իսկ Լակըմեն ծաղիկ էր քաղում ու երգում. և այնքան երջանիկ էր նա, որ չէր իմանում, թե ինչ էր երգում: Խոսում էր հեքիաթական անտառը, բզզում հսկա փեթակի պես լի կյանքով ու երգով: Նայում էր Հայանթին իր սիրած աղջկան և աննպատակ տաշում, տաշում էր եղեգը, դեն ձգում, նորը վերցնում, էլի տաշում: Հետո՝ ինչպես եղավ՝ տաշած եղեգը դրավ բերնին ու սկսեց փչել: Եղեգը մեղմ սուլեց: Հանկարծ մի չարաճճի միտք ծագեց նրա գլխում... Ժպտաց քթի տակ ու եղեգը առնելով գնաց մտավ թփերի մեջ: Ու մինչ Լակըմեն միամիտ, իր համար երգում էր առվակի ափին՝ Հայանթին սկսեց սուլել եղեգը ու նմանեցնել նրա երգին: Սկզբում սուլոցը դժվար ու կոպիտ էր, բայց շուտով այնպես վարժվեց, որ պատրանքը հաջողվեց: Ու սկսեց բարձր ու համարձակ կրկնել Լակըմեի անգիտակից երգն ու խաղերը:

– Հայանթի՛, – հանկարծ սթափվելով ձայն տվեց աղջիկը, – այդ ո՞վ է ինձ տնազ գալիս:

– Չգիտեմ, –ասավ Հայանթին թփերից դուրս գալով՝ չարաճճի ժպիտը հազիվ զսպելով:

Բայց Լակըմեն տեսնելով նրա ձեռքի եղեգը՝ գլխի ընկավ:

– Սատանա՛, էլի մի բան հնարեցիր, լավ էիր տնազ գալիս, էլ չանես:

Բայց Հայանթին ձեռք չվերցրեց իր հանաքներից: Այնքան նվագեց, այնքան սրան–նրան տնազ եկավ, որ թե՛ գործիքը կատարելագործեց և թե՛ լավ նվագող դառավ: Նվագում էր ու ամենքին զվարճացնում:

Մի տխուր տղա էլ կար, Նալը, որի սիրում էր Լակըմեին: Տխո՛ւր, հուսահատ կնայեր սրան, կարծես մայր մտնող լուսնյակ լինի գունատ, պղնձագույն: Լակըմեն

գիտեր նրա սերը, բայց, էհ, երջանիկ էր, չէր մտածում նրա մասին: Ասում էին՝ ցնդած է այդ տղան, որովհետև մենակ շրջում է անտառներում և հորթի աղիքներ կախում ծառի ճյուղերից, չորացնում, ոլորում: Ծիծաղելով ասում էին, որ նա էլ ինչ-որ նվագարան է շինում...

Եվ ահա մի անգամ անտառում Հայանթին ու Լակըմեն ջահել տղաների հետ նստել մի ծառի տակ հանգստանում էին: Երգում, զվարճանում էին տղաները գարնան սեզի վրա, և նրանց քրքիջը անտառի լռության մեջ կարկաչում էր գետակի պես: Այնտեղ էր և ծեր բանաստեղծ Խալդունը, որ եկել նստել պատանիների մեջ՝ զվարճացնում էր նրանց իր առակներով և ինքն էլ զվարճանում՝ լսելով նրանց անհոգ քրքիջը: Այնտեղ էր և Նալը, որ հեռուն, խոտերի վրա նստած նայում էր պատանիներին անժպիտ ու տխուր:

– Հայանթի՛, – ասավ բանաստեղծ Խալդունը, – մի բան նվագի՝ լսենք: Այ, Նալն էլ, ասում են նվագել գիտե. նա էլ որևէ բան կնվագի, կզվարճանանք: Դե, ձեզ տեսնեմ, ջահելներս:

– Այո՛, նվագեցեք, նվագեցե՛ք, – ձայն տվին բոլոր տղաները և զվարթացան:

– Նվագեցեք, – կատակեց չարաճճիներից մեկը, – և ո՛վ հաղթի, թող նա՛ լինի Լակըմեի սիրուն արժանի:

Բոլորը ծիծաղեցին: Ճպտաց լուսածիծաղ Լակըմեն և ուրախացավ, որ Հայանթին պիտի իր շնորհքը ցույց տա: Ժպտաց նաև Հայանթին, բայց հեգնորեն, ինքնավստահ և աչքի տակով նայեց Նալին, որը անշարժ նստել էր՝ ծիծաղելի գործիքը թևի տակին: Հայանթին համաձայնեց:

Եվ որ ցույց տա, թե ինքը ահ չունի, հայտնեց, որ առաջ ինքը կնվագի. “Նվագեմ, թող ձայները կտրեն”, – մտածեց նա իր ուժը գիտակցելով:

Թեք ընկավ գեղեցիկ Լակըմեն փարթամ ծաղիկների վրա, պատանիների շրջանակի մեջ, կարծես ձյունափայլ լուսին լիներ՝ սև նոճիների միջից նայելիս:

Ամենքը ակամա նայեցին նրա լուսափթիթ դեմքին ու սկսեցին երազել:

Ժպտաց գեղեցիկ Հայանթին, ու այդ ժպիտի հետ ցոլաց նրա ձյունե ատամնաշարը:

Ժպտաց նաև գեղեցիկ Լակըմեն, և նրա վայրահակ սև թարթիչներից կախ ընկավ սիրուն, մանրիկ ժպիտը:

Ու Հայանթին սրինգը դնելով վարդիթերի շրթունքներին՝ սկսեց նվագել:

Դուրս թռավ նվագը ու գնաց, հովի պես շնկշնկաց ու սուրաց լռանիստ հովտի մեջ: Եվ սուլոցներն այնպես առատորեն շաղ տվեց, որ կարծես աղբրի մարգարտաշար ու կլկլան կաթիլներ լինեին քարեքար թափվելիս՝ անտառի հստակ լռության մեջ: Բյուրեղի պես մաքուր և արծաթի պես հնչուն էր այդ սուլոցը, առատ, զարմացնող, շոյիչ ու հարբեցնող:

Եվ ի՜նչ բազմազան խաղեր, ի՜նչ պատրանք... կարծես սոխակներ ու սարյակներ լինեին իրար ձայն տալիս, երջանիկ մայիսին; Եվ ինչ զվարճալի տնազ երկու երջանիկների, որ ծաղիկների մեջ կարծես թռվռալիս, խաղալիս լինեին և մի սիրած ու սիրված աղջիկ քրքջալիս լինի, երջանիկ մոռացության մեջ:

Ու այսպես ծլվլաց ու կլկլաց եղանակը, արագ, ինչպես լճակի կայծկլտուք և մի վերջին ժխորով ունկնդիրներին շշմեցրեց ու նետի պես թռավ, կտրվեց:

– Ապրե՛ս, Հայանթի, ապրե՛ս, – ձայն տվին ամենքը հիացած:

– Ապրե՛ս, Հայանթի՛, – ասավ Լակըմեն՝ չկարողանալով ծածկել իր հիացումը և գուրգուրոտ աչքերով նայեց շառագունաց գեղեցիկ պատանուն:

– Ի՜նչ ճարպիկ ելևէջներ, չէ՞ր ասի, թե մարդ էր նվագողը, – խոսեց մինը հափշտակված:

– Հը՜մ, ճարտար նվագ էր, –ասավ բանաստեղծ Խալդունը:

– Ապրե՛ս, Հայանթի, ապրե՛ս, – կրկնեցին ամենքը միաբերան և ծաղիկներ քաղելով նետեցին նրա գիրկը:

Լուռ էր Նալը... անշարժ՝ ինչպես գիշերվա լռանիստ ու մռայլ արձան: Ունքերը խոժոռ, զուսպ սաստը աչքերում, հիվանդ իր խորհրդավոր արվեստով՝ գետնին էր նայում, միշտ թևի տակ սեղմած տարօրինակ գործիքը:

Հերթը նրանն էր...

– Է՛հ, հիմի էլ թող Նալը նվագի, – կարգադրեց ծեր բանաստեղծը:

Ու մինչ Նալը կպատրաստվեր՝ մի շշուկ անցավ բոլորի մեջ, երբ նայեցին նրա ծիծաղելի, հողի գույն գործիքին:

– Շերեփ է, – փսփսաց մեկը ու քիչ մնաց փոթկար:

– Թիակ է, – ասավ մյուսը, – վերցնես, մարդու մեջքին թակես:

– Սպասեցե՛ք, գուցե մարդը ուզում է իր այն աղեղով բուրդ գզի, – ծիծաղեց երրորդը:

Ժպտաց մինչև անգամ Հայանթին, և չար էր այդ ժպիտը:

Միայն Լակըմեն չխոսեց: Երբ նայեց Նալի աչքերին, զգաց, որ այդ պատանու մեջ թաքնված է մի մռայլ ու աղետավոր հոգի: Եվ մի անորոշ ահ մտավ սիրտը:

Նայեց նրան և ծեր բանաստեղծը և գլուխը թեթևակի շարժեց:

Եվ նա, այդ խորհրդավոր Նալը, հանկարծ շուրջը նայեց ոգևորված, վճռական: Հանկարծ գունատվեց, կերպարանափոխվեց, և բոլորը սաստված շունչները պահեցին: Եվ նա գործիքը ծնկան, ինքը վրան կռացած ինչպես գետնահակ, լացող ուռենի՝ հանկարծ ջլուտ, նիհար ձեռքով քաշեց աղեղը լարերի վրայով ու սկսեց:

Տարօրինակ ձայն հանեց այդ գործիքը: Տխուր ու մաղձոտ մարդու ձայն: Ինչպես սիրտը լցված մարդ, որ հազիվ է զսպում հեկեկոցը՝ այնպես այդ խեղդված ձայնը ծանր ու տխուր սկսեց դողալ և հետզհետե լցվելով ուժեղացավ, ծավալվեց ու գանգատավոր շեշտով մի հարցմունք արեց, հետո զսպելով իր փղձուկը նորից սրտին ընկավ, մարեց:

Հետո – իբրև դրան պատասխան–մի ուրիշ ձայն, ավելի ուժեղ և հնչուն, սկսեց որբ ձայնով սրվել, արծարծել մի տխուր պատմություն, այնքան տխուր, որ կարծես տառապած մարդկության վեպը լիներ: Սկսեց այնպես հեծկլտալ, այնպես հոնգուր–հոնգուր լաց լինել, որ ծառերի բները լցրեց թախիծով, տրտմեցրեց ծաղիկները, սառեցրեց արևի լույսը, հորիզոնում ծավալվեց անապատների անհուն տրտմությամբ և աշխարհը դարձրեց տխո՛ւր–տխո՛ւր վշտերի հովիտ: Լուրջ էր այդ

եղանակը, ինչպես մահը, և անկեղծ, ինչպես մարդուս մեջ թաքնված սիրտը: Սրտից էր, – ահա թե ինչու այնպես սաստեց ու հափշտակեց ամենքի սիրտը: Ճշմարիտ էր այդ երգը, և ամենքը տրտմած կախեցին գլուխներն ու այդպես գետնահակ մտածել սկսեցին այն մեծ տառապանքի վրա, որը գիտես, որ կա՛, ճշմարի՛տ է, ամենուրե՛ք, ամենքի՛ համար:

Ու այդպես գնա՛ց եղանակը, տաքացավ: Ու ոնց հուսահատ անապատի շուրթերից՝ ինչպես գերեզմանից՝ դուրս գար դալուկ լուսնյակը և անապատին նայեր իր մեռելի դեմքով, այնպես հանկարծ դուրս ելավ չորրորդ լարի տխուր ձայնը ու երգեց ծա՛նր, լիաձա՛յն ու տիրաբա՛ր: Ու երբ դրան խառնվեց նաև երրորդ լարը, լսվեցին այնպիսի ոռնոցներ, կարծես այդ անկենդան անապատում լցվել էին գոս տատասկներ, որ պառավ ձեռքերի պես օդում կարկամած գութ էին աղերսում: Բայց չկա՛ր գութ... Հանկարծ զայրացավ եղանակը, անցավ բարակ լարերի վրա ու սկսեց այնպես սողոսկել, հեծել, ինչպես խորշակը փչելիս լիներ, տարուբերելով այն տատասկները, որ խելացնոր շարժումներով կարծես կոծապար էին բռնել: Եվ երբեմն լսվում էին այնպիսի ձռոցներ ու լացեր, կարծես հուսահատ միայնությունը, նստած ավազների վրա, փետում էր իր գորշ մազերը:

Այնպես երգե՛ց, երգեց ու հետո մեղմելով հաշտվեց, հեռացավ ու տխո՛ւր թախիծով սրտին ընկնելով լռեց...կարծես նորից մտավ իր գերեզմանը:

Մի ծպտուն իսկ չլսվեց: Ունկնդիրները քարացած էին: Ամենքը ներշնչված այդ խոր նվագով՝ մռայլ հայացքները բարձրացրին դեպի Լակըմեն ու Հայանթին:

Ահա՛ թե որն է նվագը:

Ցած դրեց սրինգը պարտված Հայանթին ու նախանձախնդիր նայվածքը ահով ուղղեց Լակըմեին: Մռայլվել էր Լակըմեն: Բայց այդ մռայլը նման էր մի թեթև թուխպի, որ գալիս սքողում է գեղեցիկ մայիսյան օրը: Ճիշտ է, վախով էին լցված նրա որսորդ տեսած եղնիկի աչքերը, բայց նա բարձրացնելով այդ շողշողուն աչքերը՝ դեպի Հայանթին՝ ասավ կարծես նեղացած:

– Գնանք տուն, Հայանթի:

Տղայքը հարցական հայացքով նայեցին Լակըմեին ու չհասկացան նրա երկյուղը: Ու մինչ ամենքը շփոթված աչքերով նայում էին նրան, նա վեր կացավ ու Հայանթու հետ հեռացավ:

Երբ քիչ հեռու էին, փսփսաց.

– Ես քե՛զ եմ սիրում, Հայանթի, քե՛զ, նա այնպես տխո՛ւր է... նա ինձ վախեցնում է իր գործիքով: Նրա նվագը օձի պես մտավ սիրտս ու գալարվեց: նանք, նվագի՛ սրինգդ և նորից ուրախացրո՛ւ ինձ:

նաց նա, և մռայլ շիրմաքարի պես մնաց Նալը՝ հայացքը դեպի հեռացող անսիրտ ու գեղեցիկ Լակըմեն, դողդոջ ձեռքը գործիքին սեղմած:

Մնացին ունկնդիրները և ծեր բանաստեղծ Խալդունը:

– Ապրե՛ս, Նալ, – ասին նրանք, և այդ ասին մի ձայնով, որով մխիթարում են մեռելատերերին:

Տխրեց Նալը և գլուխը կախեց: Հանկարծ բարձրացրեց իր գործիքը և ուզում

էր քարին խփի կոտրի, բայց միայն դառնորեն օդում թափ տալով դրեց և գլուխը ափերի մեջ առած՝ լռեց:

Նայեց նրան ծեր բանաստեղծը՝ ժպտաց գորովալից աչքերով ու ծանր թափ տալով իր ալևոր գլուխն ասաց.

– Ինչո՞ւ ես ուզում կոտրել այն գործիքը, որ քեզ հետ է ծնվել և քեզ հետ պիտի մեռնի: Նա՛լ, դու այն մարդկանցից ես, որ մեծ տառապանքի համար են աշխարհ գալիս: Եվ քո նվագը երգն էր այն մեծ արվեստագետի, որի ներշնչողը մահն է եղել, և որը լացել է ստեղծելիս: Նա արդեն բաց է արել աշխարհիս բոլոր խնդությունների ու ցավերի դռները և նայել ներս: Էհ, Նա՛լ, քոնն է իսկական արվեստը, ու էլ ոչ մի գործիք չկա հնարելու: Ի՞նչ է սրինգը սրա մոտ – ականջի զվարճություն և ուրիշ ոչինչ:

նա՜, կյանքի մեջ թշվառ և արվեստի մեջ երջանիկ Նալ, գնա՜, կրիր ակնակուռ թագերի թագը, և թող աշխարհիս ստրուկներն ու արքաները գլուխ խոնարհեն քո արվեստի առջև:

Ու տանջվի՛ր... Այո, Լակըմեն սիրում է սրնգահարին, որը նրան տալիս է համեստներից համեստը, բայց մարդկանց համար թանկերից թանկը – այս կյանքը և նրա ուրախությունը: Նա քեզ չի սիրում և ինչո՞ւ սիրի... Դու կմաշես այդ թիթեռնիկի կյանքը քո անկշռելի տառապանքների մեջ՝ միշտ լսել տալով քո աշնան կոծերն ու մահվան ձայնը...

Եվ ի՞նչ, դու նրան չես էլ կարող սիրել, աղետավոր հոգի, որովհետև քո արվեստը սիրողը ուրիշ բան չպիտի սիրի և արժի՞, և մի՞թե կարող է ուրիշ բան սիրել...